«ՀԱՅԲԻԶԲԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն Ապահովագրական ընկերությունների հետ համագործակցության նպատակով կազմակերպում է մրցույթ:

Մրցույթն անց է կացվելու Բանկի կողմից ֆիզիկական անձանց տրամադրվող վարկերի շրջանակներում գրավադրված շարժական և անշարժ գույքի, ինչպես նաև դժբախտ պատահարներից ապահովագրության նպատակով: Մրցույթում հաղթող Ապահովագրական ընկերության/ների հետ կկնքվի Գլխավոր պայմանագիր:

Մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող Ապահովագրական ընկերությունները կարող են մրցութային հայտերը փակ ծրարներով, վերջիններիս վրա նշելով ուղարկող (Մրցույթի մասնակից) և ստացող (Մրցույթի կազմակերպիչ) կազմակերպությունների հասցեները և ամբողջական անվանումները և գրառում՝ **«Մրցութային հանձնաժողովին»**, ներկայացնել Բանկի գտնվելու վայր՝ ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 48 հասցեով:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել.
Կոնտակտային անձ՝

Աննա Ալիխանյան (Բանկային ծառայությունների զարգացման բաժնի պետ)
Հեռ.՝ +37410 59-20-69 (164),
Էլ.հասցե՝ anna.alikhanyan@armbusinessbank.am

Լուսինե Կեվեյան (Կորպորատիվ վաճառքների բաժնի պետ)
Հեռ.՝ +37410 59-20-17 (153),
Էլ.հասցե՝ lusine.keveyan@armbusinessbank.am

Մրցույթի հայտերը կընդունվեն 2013 թվականի հոկտեմբերի 1-ից ժամը 9.30-ից մինչև հոկտեմբերի 11-ը ժամը 17:00 ներառյալ, մրցույթը կիրականացվի 2013թ.-ի հոկտեմբերի 18-ին:

Մրցույթի անցկացման պայմանները Ապահովագրական ընկերությունների համար

1. *Մրցույթի համար պահանջվող փաստաթղթերկի ցանկը*

- Դիմում.
- Կանոնադրության պատճեն՝ լրացումներով և փոփոխություններով.
- Պետական ռեգիստրի գրանցման վկայականը՝ իր ներդիրներով, ներառյալ տնօրենի վերաբերյալ տեղեկատվության ներդիրը.
- Ընկերության ՀՎՀՀ.
- Ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիայի պատճեն.
- Նախորդ հաշվետու ֆինանսական տարվա՝ հարկային մարմինների կողմից հաստատվող հաշվետվություններ.
- Նախորդ հաշվետու ֆինանսական տարվա անկախ աուդիտորական եզրակացության պատճեն.
- Վերջին հաշվետու ամսվա դրությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք.
- Ապահովագրության յուրաքանչյուր տեսակի գծով տիպային պայմանագրեր.
- Տեղեկանք ապահովագրական գործառնությունների ընդհանուր ծավալում յուրաքանչյուր տեսակի ապահովագրության մասնաբաժնի վերաբերյալ, վերջին 6 ամիսների ընթացքում ապահովագրական հատուցումների գումարը.
- Տեղեկանք այլ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության վերաբերյալ.

- Կազմակերպության վերաապահովագրողների վերաբերյալ տեղեկատվություն.
- Սպասարկման սակագները՝ ըստ ապահովագրության տեսակների.
- Դատական դեպարտամենտից սնանկության բացակայության վերաբերյալ տեղեկանք.
- Այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության:

2. *Մրցույթին մասնակցող ընկերությունները պետք է համապատասխանեն հետևյալ չափանիշներին*

- Ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիայի առկայություն.
- Ապահովագրական գործունեության իրականացման առնվազն 1 (Մեկ) տարվա փորձ.
- Ապահովագրական ընկերության մասնաճյուղային ցանցի առկայություն.
- Բանկերի կամ այլ ֆինանսական հաստատությունների հետ համագործակցության փորձ.
- Ապահովագրավճարների մուտքագրման նպատակով Բանկում Ապահովագրական ընկերության կողմից առանձին հաշվի բացում (Հաշվի բացակայության դեպքում)
- Ապահովագրական ընկերության դժբախտ պատահարներից մահացության դեպքերի և բնակելի անշարժ գույքի ապահովագրական շուկայում ռիսկեր ապահովագրելու առնվազն 2 տարվա փորձի առկայություն:
- Ապահովագրական ընկերությունը պետք է պատրաստակամ լինի համագործակցության ողջ ժամանակահատվածի ընթացքում Բանկում ներդնել Բանկի վարչության կողմից սահմանված գումարի չափով ժամկետային ավանդ (ավանդը դիտարկվում է որպես համագործակցության ապահովության միջոց): Համագործակցության ընթացքում այս պահանջի խախտման դեպքում Բանկը կարող է տվյալ Ապահովագրական ընկերության հետ ժամանակավորապես դադարեցնել համագործակցությունը:

3. *Մրցույթի անցկացում*

Մրցույթի անցկացման օրը Մրցութային հանձնաժողովը նիստ է հրավիրում: Նիստի ընթացքում հանձնաժողովի նախագահը բացում է հայտերի ծրարները և ներկայացնում է հանձնաժողովի անդամներին և դրանք դրվում է քննարկման և քվեարկման: Թերի ներկայացված փաստաթղթերի փաթեթը չի քննարկվում: Մրցույթի հաղթողը որոշվում է բաց քվեարկությամբ՝ հանձնաժողովի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Նիստը կայացած է համարվում, եթե նիստին մասնակցում են մրցութային հանձնաժողովի անդամների առնվազն երկու/երրորդը:
Մրցութային հանձնաժողովի նախագահը մրցույթի արդյունքները և Հանձնաժողովի նիստի արձանագրությունը ներկայացնում է Բանկի վարչության քննարկմանը: Վարչությունը՝

- կամ չի հաստատում մրցույթի արդյունքները և որոշում է նոր մրցույթ հայտարարել (այս դեպքում գործընթացը վերսկսվում է),
- կամ հաստատում է մրցույթի արդյունքները և հանձնարարում է Նախաձեռնող ստորաբաժանմանը և Իրավաբանական վարչությանը նախապատրաստել հաղթողի հետ կնքվելիք Գլխավոր պայմանագիրը:

Ապահովագրության պահանջները պետք է ներառեն առնվազն հետևյալը.

1. Անշարժ գույքի ապահովագրություն

Գույքի ապահովագրության պահանջները պետք է ներառեն առնվազն հետևյալը.

- Պատահական ոչնչացում, պատահական վնաս կամ փչացում:
- Ապահովագրական գումարը պետք է հավասար լինի գույքի վերականգնման արժեքին:
- Ապահովագրական դեպքի ի հայտ գալու պարագայում վարկատուն պետք է իրավունք վերապահի վարկառուին ապահովագրական ընկերությունից ստացված փոխհատուցումն ուղղել վնասի վերականգնմանը (գրավադրված գույքի մասնակի վնասման դեպքում) կամ նոր բնակարանի ձեռքբերմանը (գրավադրված գույքի ամբողջությամբ ոչնչանալու դեպքում): Ընդ որում, նոր ձեռք բերված բնակարանը պետք է հանդիսանա վարկի նոր ապահովվածություն (գրավ):
- Գույքը պետք է ապահովագրված լինի վարկի ողջ ընթացքում
- Ապահովագրության պայմանագրով շահառուն և ապահովադիրը պետք է հանդիսանա Բանկը:
- Ապահովագրության պայմանագրով պետք է ծածկվեն հետևյալ դեպքերի հետևանքով գույքի կորուստը կամ դրան պատճառված վնասները. հրդեհ, բնական աղետ, Կարկուտ, ջրհեղեղ կամ տեղատարափ անձրև, փոթորիկ կամ ուժեղ քամի, ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, հակահրդեհային համակարգի վթար, ջրի և այլ տարրերի ներթափանցումը ապահովագրված տարածքներ, կայծակ (ամպրոպի էլեկտրական պարպում), կաթսայատան, գազատարի, ճնշման փականներ և նմանատիպ այլ միջոցների պայթյուն, ընտանեկան նպատակներով օգտագործվող գազի պայթյուն, թռչող օբյեկտների կամ դրանց մասերի անկում ապահովագրված գույքի վրա, գողություն, կողոպուտ՝ ներառյալ երրորդ անձանց կողմից միտումնավոր կամ անփութության պատճառով հասցված վնաս, սակայն բացառելով փոխհատուցումը Վարկառուի միտումնավոր գործողությունների համար, որոնք ուղղված են գույքի մասնակի ոչնչացմանը կամ դրան վնաս հասցնելուն:
- Գրավադրվող գույքը պետք է ապահովագրվի իր գնահատված շուկայական արժեքի չափով:
- Ապահովագրական վճարների տարաժամկետ /տարեկան կտրվածքով/ իրականացման հնարավորություն

Դժբախտ պատահարներից ապահովագրություն

- Ապահովագրական գումարը պետք է առնվազն հավասար լինի վարկի գումարին,
- Ապահովագրություն մարմնական վնասվածքի, անաշխատունակության, հաշմանդամության և կյանքից զրկվելու դեպքերի համար
- Պահանջի դիմաց վճարվող ցանկացած գումար պետք է վճարվի Բանկին,
- Ապահովագրությունը պետք է առնվազն գործի վարկի ողջ ընթացքում,

- Ապահովագրության պայմանագրով շահառուն և ապահովադիրը պետք է հանդիսանա Բանկը:
- Ապահովագրական վճարների տարաժամկետ /տարեկան կտրվածքով/ իրականացման հնարավորություն

Տրանսպորտային միջոցի ապահովագրություն

- Ապահովագրական գումարը պետք է առնվազն հավասար լինի վարկի գումարին,
- Վթար, այդ թվում վթարի արդյունքում հրդեհվելը, այլ տրանսպորտային միջոցի բախվելը, անշարժ կամ շարժական առարկաներին վրաերթի ենթարկելը, դրանց հետ բախվելը, շրջվելը, դրա վրա որևէ առարկայի ընկնելը, այդ թվում՝ ծառերի, ձյան և սառույցի, ջրի մեջ ընկնելու հետևանքները,
- Տարերային աղետներ՝ ուժգին քամի, տայֆուն, փոթորիկ, մրրկասյուն, ջրհեղեղ, հեղեղում, կարկուտ, տվյալ տեղանքին ոչ հատուկ մթնոլորտային տեղումներ, կայծակնահարում, որը չի հանգեցրել հրդեհի առաջացմանը, սողանք, փլվածք, սելավ, ձյան հուսին,
- Հրդեհ, պայթուն,
- Երրորդ անձանց հակահիրավական գործողություններ՝ հրկիզում, պայթեցում, ինչպես նաև առանձին մասերի և/կամ լրացուցիչ սարքավորումների վնասում,
- Տրանսպորտային միջոցի կամ լրացուցիչ սարքավորումների կորուստ
- Պահանջի դիմաց վճարվող ցանկացած գումար պետք է վճարվի Բանկին,
- Ապահովագրությունը պետք է առնվազն գործի վարկի ողջ ընթացքում,
- Ապահովագրության պայմանագրով շահառուն և ապահովադիրը պետք է հանդիսանա Բանկը:
- Ապահովագրական վճարների տարաժամկետ /տարեկան կտրվածքով/ իրականացման հնարավորություն